հաս և գործակալութիւնք կաւառացն Էջմիածնայ, Սուրմալուայ, Երեւանայ և Նոր - Բայազիտայ (տես «Ցիսնամեակ Թեմական դպրանոցին Երեւանայ» 1868 69 - 70 յերես 109—120)։

ԺԹ. Ի 1870 ամի, ըստ առաջարկութեան Տ. Գէորգ կաթուղիկոսի և հաստատութեամբ Նորին Կայսերական Մեծութեան Ալէքսանդր Բ. Նիկոլայեւիչ Կայսերն ամենայն ռուսաց ի 20 մարտի կարգեցայ ի պաշտաման անդամութեան Սինոդի Ս. Էջմիածնի[1])։

Ի. 1871 ամի, հրամանաւ Սինոդի ի 15 մարտի հմրւ. 628, հիմնեալ ի վերայ կոնդակի Գէորգ կաթուղիկոսի յ7-ն մարտի № 55, կարգեցայ նախագահ տպարանական ժողովոյն Ս. Էջմիածնի։

ԻԱ. Ի 1872 ամի, ի 26 ն մարտի, Տ. Գէորգ Դ. կաթուղիկոսն ձեռնադրեաց զիս յաստիճան եպիսկոպոսութեան, ընդ իս զՑովակիմ եպիսկոպոսն Երեւանցի անդամակիցն իմ ի Սինոդի, և զԳրիգոր եպիսկոպոսն Ղազիրեանց և զԳրիգորիս եպիսկոպոսն Կ. Պոլսեցի՝ առաջնորդն հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի։

ԻԲ. Ի 1873 ամի, Տ Գէորգ կաթուղիկոսն ընդ կոնդակի իւրոյ տուելոյ յանուն իմ յ31-ն դեկտեմբերի հմրւ. 582, շնորհեաց ինձ ի պարգեւ զոսկեայ ականակուռ մատանին իւր, վասն ցուցակագրելոյ և պատրաստելոյ զտօմարն ամենատեսակ զարդուց և անօթոց նորակերտ թանգարանի Ս· Էջմիածնի։

ԻԳ. Կոնդակաւ Տ. Գէորգ կաթուղիկոսի ի 28-ն յունվարի 1876 ամի հմրւ. 25, կարգեցայ ժամօրհնող տաճարի Ս. Էջմիածնի։

ԻԴ. Ի 1881 ամի, 10-ն հոկտեմբերի Տ. Գէորգ Կաթուղի-

---

[1])Սինոդի անդամութեան պաշտօնը վարեցի 16 տարի (յունիսն 1887), իսկ թէ բաց յանդամութենէն, որքան դրաւոր աշխատութեամբ օժանդակել եմ Գէորգ կաթուղիկոսին և նորա բանաւոր յանձնարարութիւնները կատարել, քաջ յայտնի է Ս. Էջմիածնի ժամանակակից միաբանութեանը։